

“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ Լ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, 1901

ԹԻՒ 10

ՅԱԿՈՐԻ ԹԱՂՈՒՄԸ

Շատ շահեկան է այն պատմութիւնը զոր կը կարգանք Շննդոց Գիրքին վերջին գլուխուն մէջ. Յակորի կեանքը շատ փոփոխութիւններէ անցած էր, և ինք մարդկային վիշտերէն իր բաժինն ընդունած էր լիովին: Ինք ստիպուեցաւ փախչել իր տունէն և երկար տարիներ անցնել Լարանի ծառայութեան մէջ, որ կը շանար զրկել զանկա անոր դժուարաւ ձեռք բերած վարձքէն: Անոր սիրելի կիներ մեռաւ իր մատղաջ հասակին մէջ, անոր ամենասիրելի որդին գազաններէ պատառուած էր իր կարծիքով, և միւս որդիները վշտացուցին զանկա իրենց չար վարքովը: Յետոյ եկաւ երկարատև սովը, Շմառնի առժամանակեայ կորուստը, և ինչնիամինը կորսնցնելու վախը: Եթէ Բենիամինի եղբայրները ետ դառնային առանց զանկա իրենց հետ բերելու, ձերբունկն կրնար մեռնել վիշտէն, և պիտի զգար թէ կեանքը ուրիշ բան չէ բայց միայն դառնութիւն: Բայց եկաւ անակնկալ փոփոխութիւնը: Ամպերը ցրուեցան և արևը պայծառապէս ճառագայթեց, Նահապետին վերջին օրերը խաղաղութիւնով ու մխիթարութիւնով լեցուն էին, և թաղման ատենը մեծ պատիւներ ընծայուեցան անոր: Բայց անոր տեսածը միայն այս արտաքին փոփոխութիւնը չէր: Անոր նկարագիրը որ առաջ խարերայ և անձնասէր էր, մաքրուեցաւ, և անոր այս ներքին փոփոխութիւնները յառաջ բերելու համար էր մասամբ որ



կ'առնեն, թէ մեծ ապէս վտանգաւոր է թոյլ երասանակով (կէմ) վարել ձիերը. Շատ անգամ փախած են ձիերը ճիշդ այս պատճառով: Շոգեշարժ մեքենայի մը սուր սոյլը, շան մը բարձրաձայն հայելը երբ ագարակէ մը դուրս կը ցատկէ, կամ մինչև անգամ թղթի կտոր մը որ ճամբուն վրայ կը թռչարի, յոյժ շատ անգամ բաւական է վախցնելու ոգևորած ձի մը: Եթէ այսպիսի փափուկ վայրկեանի մը մէջ երասանակները թոյլ կը բռնուին, և չզսպուիր վախցած ձին, կենդանին խրամը կը նետուի, կը սապալէ կառքը, և շատ հաւանական է որ կը միաստին կառքին մէջ դտնուողներէն մէկ քանին, կամ ճամբէն դուրս կը ցատկէ ձին, և այնքան կը կատողի որ անհնար կ'ըլլայ սանձել և կը փախչի կ'երթայ:

Իմաստութիւն է սանձը, երասանակը պիտի բռնել ուրիշ բաներու ատեն ալ: Մեր բնաւորութիւնները, կիրքերը, ըզրուները և ախորժակները կան: Եթէ մեր կեանքին մէջ թոյլ սանձով վարենք զանոնք, պիտի տեսնենք որ երբեմն կը շեղին ճամբէն և կրնայ մեծ աւերկութիւն և վտանգ յառաջ գալ:

—*—*—*—

ԿՈՐՍՈՒԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐ

Պոսթընի միտինարական կայանի մը պետը կը պատմէ թէ իրեն մէկ ծանօթը երբ իր գործին կ'երթար ձմեռուան առաւօտ մը շատ կանուխ, տեսաւ պզտիկ տղայ մը որ տան մը դրան աստիճաններուն վրայ նստած էր: Տղան շատ թեթև հանդերձ հա-

Սատուած թոյլ տուաւ անոր կրել այնքան վիշտ:

—*—*—*—

ԹՈՅՈՒ ԵՐԱՍԱՆԱԿ

Ամէն տղի կեանքին մէջ ուրախութեան օր մըն է, երբ առաջին անգամ ձի կը վարէ: Երբ պատանին կը նստի իր հօրը քով որ սանձին փոկերը կը բռնէ արկածներ արգիլելու համար, և պատանին ինք ալ կը սկսի կառավարել աշխոյժ և ամենի ձիերը փողոցին կամ ճամբաներու վրայ, կը խորհի թէ մեծ քայլ մը առած է դէպ ի մարդկութիւն, երբ այս բանը յաջողութեամբ կը կատարէ: Բայց պէտք չէ որ երբեք մոռնան սա մէկ բանը անոնք որ իրենց առաջին դասը

զած էր, և այնպէս մնած, անօթի և լքուած՝ որ մարդը հարցուց, «Պըզտիկ, ի՞նչ կ'ընես հոս:» «Աստուծոյ կը սպասեմ որ հոգ տանի ինձի», ըսաւ տղան անակնկալ կերպով: «Աստուծոյ կը սպասես որ քեզի հոգ տանի»: «Այո», ըսաւ տղան, «մայրս ըսաւ թէ Անիկա հոգ պիտի տանի, և մայրս բնաւ սուտ խօսած չէ»: «Տուն գնա, տղաս», ըսաւ մարդը, վասն զի չկրցաւ ուրիշ պատասխան մը գտնել տալու, «ատիկա քեզի յարմար տեղ չէ»: «Բայց ես տուն չունիմ, կը տեսնէք որ», պատասխանեց տղան, «Աստուած առաւ հայրս և ճոնին, և ետքը մայրս մեռաւ: Եւ մայրս ըսած է թէ, եթէ բարի տղայ ըլլամ, Աստուած մէկը պիտի զրկէ զիս հոգ տալու համար: Եւ ես վստահ եմ՝ թէ պիտի զրկէ, ինչու որ մայրս երբեք սուտ չէր խօսեր»: Այն ատեն մարդը միտք բերաւ որբանոցը, ուր ինք, անհոգ կերպով և իբրև սովորութիւն, ամէն տարի գումար մը ստակ կը զրկէր, և բռնեց տղին ձեռքէն, «Իմ հետս եկուր», ըսաւ, «Աստուած զիս զրկեց քեզ հոգ տալու համար»: «Այո, այո, ես գիտէի թէ Անիկա մէկը պիտի զրկէր», պատասխանեց պզտիկը վստահութեամբ: «Բայց, ինձի կ'երևնայ թէ քու գալդ շատ ուշացաւ:»

ԻՆՉՊԵՍ ԳԻՏՅԱԼ


Կը պատմուի թէ ժամանակաւ երկու երիտասարդներ գացին արտապահի մը և ձի մը ու կառք մը վարձեցին, և անոր ըսին թէ իրենք եօթը մղոն հեռու գեղ մը պիտի երթան: Երբ ետ եկան, կառքին տէրը մտածեց թէ անոնք իրենց ըսածէն շատ մը հեռուն գացած էին: Հարցուց թէ ո՞րչափ տեղ գացին: Պատասխանեցին թէ միայն մօտի գեղը գացած էին: Այն ատեն կառքին տէրը բացաւ պզտիկ սնտուկ մը որ կառքին եզերքին կցուած էր: Այս սնտուկին մէջ ժամացոյցի պէս պզտիկ բան մը կար, որ ճիշդ կը ցուցնէր թէ կառքին անիւները քանի՛ անգամ դարձած էին: Զայս կ'ընէր սլաքի մը միջոցով որ կը ցուցնէր ժամացոյցի տախտակի նման տախտակի մը վրայի թուանշանները: Մարդը գիտէր թէ մղոն մը տեղ անիւները քանի՛ դարձ կ'ընէին: Ուստի երբ տեսաւ սլաքին ցուցած թուանշանը, անմիջապէս գիտցաւ թէ կառքը քանի՛ մղոն գացած

էր: Հասկցաւ թէ կառքը երեսուն մղոն ճամբորդած էր փոխանակ տասնընչորսի: Այս երիտասարդները չէին գիտեր թէ իրենց հակառակ լռիկ վրկայ մը կը կրէին: Չէին գիտեր թէ այդ փոքրիկ գործիքը ճիշդ հաշիւ կը պահէր և կը ցուցնէր թէ ո՞րչափ կանգուն տեղ գացած էին:

Բարեկամ մը այս պատմութիւնն ընելէ ետքը ըսաւ, խղճմտանքն ալ ճիշդ այսպէս է: Միշտ և հանապաղ կը գործէ, և վերջը մեր բոլոր ըրածներուն ճշգրիտ հաշիւը պիտի տայ:

ՄԱԳՆԻՍՆԵՐԸ ԻՔՐԵՒ ԽՈՐԳԱԿ

Հոս ցուցուած պարզ մեքենան հիմնուած է սա իրողութեան վրայ թէ երբ երկարակամ հասնք մը կ'անցնի երկաթի կտորի մը բոլորտիքը փոթ-



թուած թելի մը մէջէ, երկաթը մագնիսի կը փոխուի: Զողին վրայ քանի մը այսպիսի մագնիսներ կը կախուին, ինչպէս կը ցուցուի հոս: Երբ հասնքը կը հաղորդուի, մագնիսները մեծ երկաթ տախտակ մը կը վերցնեն, և անոնց միջոցաւ տախտակը կը տարուի և կը ձգուի գործարանին ունէ փափաքուած մասին մէջ ուր կը հասնի խորհակը: Երկարակամ հասնքը դադարածին պէս, տախտակը կ'իջնայ, վասն զի ա՛լ չքաշուիր: Երկարակամ այս խորհակը շատ պիտանի է, բայց չեն կրնար գործածուիլ շատ տաք տախտակներ, վասն զի այն ատեն չեն կրնար քաշուիլ մագնիսներէն:

ՉԳՈՒՇՈՒԹԵԱՆ ԱՆՓՈՅԹ ԸՂԱԼ

Բնաւ մէկը պէտք չէ որ ինքզինք բուսական ապահով համարի փորձութեան առջև: Երբ մեր կեանքին մէջ փորձութիւններ մեզ կը շրջապատեն, եթէ կ'ուզենք անոնց դէմ դնել յաջողութեամբ, մեր բոլոր գործութիւնը հաւաքելու և ամէն կարելի բան ընելու ենք անոնցմէ չյաղթուելու համար: Երիտասարդ մը որ առաջին անգամ տնէն կը հեռանար, իր ժամացոյցին երեսին վրայ փակցուց մօրը փոքրիկ մէկ պատկերը: Օրը քանի մը անգամ

կը նայէր քաղցր դէմքին վրայ անոր՝ որուն սիրտը պիտի վշտանար եթէ ինք ծուռ ճամբու մէջ քալէր: Բայց ինք ծուռ ընթացքի չէր հետեւեր: Երբ իր մօր պատկերին կը նայէր, փորձութիւնը կը հեռանար միշտ: Անգամ մը երբ քանի մը ծանօթներ յորդորեցին զանիկա իրենց հետ երթալ տարակուսելի տեղ մը, քաջեց ժամացոյցը ըսելով, «Նայիմ ժամանակ կա՞յ:» Բայց փոխանակ ժամուն նայելու, որ իր նպատակն էր, նայեցաւ իր մօր սիրելի աչքերուն մէջ, և արիւնը սլտեբուն մէջ բորբոքեցաւ: Ոչ այն ատեն, և ոչ անկէ ետքը ժամանակ գտաւ իր ծանօթներուն առաջարկած զրօսանքին տեսակէն ելող զրօսանքներու երթալու:

Անգամ մը հարցուեցաւ երիտասարդի մը թէ ինչո՞ւ միշտ կը կրէ ֆրիստոնեայ Զանասիրաց ընկերութեան պիտակը: Երիտասարդը պատասխանեց, «Այդ պիտակը զիս կ'ազատէ շատ մը փորձութիւններէ: Մարդիկ կը գիտնան մէկ վայրկեանի մէջ թէ կան բաներ զորոնք այսպիսի պիտակ մը կրող մէկը փոյթ

չրներ կատարէ:» Կը փափաքինք որ մեր բոլոր երիտասարդներն ու պատանիները այսպէս իմաստուն ըլլան: Անք կատարելապէս ուղղութեան նուիրել, և ֆրիստոնեական հաւատքի և նկարագրի համբաւ չահլի, ամենէն ճշմարիտ պաշտպանութիւններուն կարգէն են: Վասն զի փորձութիւնները որ կը յաղթեն մէկը որ կրկնապատիկ ջանքով կ'ընդդիմանայ, կ'անցնին ուրիշ մը քովէն որ ֆրիստոնիսն է, և սա երբեք չզգար անգամ թէ անոնք իրեն այնքան մօտէն կ'անցնին:

ԱՌԻԹԸ ԶՓԱԽՅՆՈՂ ՏՂԱՆ


Շատեր կը ցախին որ ֆրոֆէսոր Թհոմաս Չ. Մէնտընհոլ հրատարեցաւ Ուսթրիի Բագմարուեհտեան Հաստատութեան սնօրէնի պաշտօնէն: Անիկա երկար ժամանակէ ի վեր երկրին (Ամերիկայի) ամէնէն ընտիր չափագէտներէն մէկը ճանչցուած է: Երբ Թհոմաս Մէնտընհոլ տղայ էր, և օր մը Օհայո նահանգին մէջ իր հօրը ագարակին մէջ կ'աշխատէր, ան հեռու գեղի մը բնակիչներէն մէկը եկաւ և կով մը գնեց անոր հօրմէն: «Հիմա», ըսաւ մարդը, «պէտք է որ տուն տանիմ այս կովը, բայց ես ինքնս չեմ կրնար տանիլ զանիկա իմ ձիերուն»

հետ քսան մղոն տեղ, և կովը չկրնար բաւական արագ քայլել անոնց հետ: Տղաս, ես քեզի տղար մը կու տամ, եթէ իմ տեղս բերես զանիկա:» Թհո մաս չփախցուց այս առիթը, և հետեւեալ առաւօտ արշաղոյսին ճամբայ ելաւ բոպիկ ոտքով: Երբ հոն հասաւ, ընդունեց տղարը, որ իր վաստկած առաջին ստակն էր, և ըսուեցաւ իրեն որ գիշերը հոն մնայ և հետեւեալ առաւօտ տուն դառնայ: Երբ իր սենեակը դարձաւ, գրքատան մը առջևէ անցաւ, որուն վրայ կը գտնուէր երկրաչափութեան գիրք մը: Առաջ բնաւ տեսած չէր երկրաչափութիւն: Իրեն փափաք մը եկաւ որ այս գիրքը հետ առնէ և աչքէ անցնէ: Գիրքը իր սենեակը տարաւ, և կարդաց, մտածեց անոր վրայ որչափ ատեն որ մտը բաւեց: Այնուհետեւ անոր վրայ երազեց գիշերուան մտացած մասին մէջ: Առաւօտուն երկչափութիւնով մը ըսաւ իր հիւրընկալին թէ արդեօք այն տղարով կրնայ գնել այդ գիրքը: Ռարախութիւնը շատ մեծ եղաւ երբ Այո պատասխանն ընդունեց: Հազիւ կարող եղաւ նախաճաշ ընելու, և տուն վերադարձաւ կատարելապէս երջանիկ իր թանկագին գիրքը բազուկին ներքեւ առած: Այս եղաւ անոր առաջին քայլը գիտութեան մէջ, և իր դիպուածով հանդիպումը Եւկղիդէսի այն երկրաչափութեան, փափաք արթընցուց իր մէջ և պատճառ եղաւ որ դպրոց և գոլէճ երթայ, և իր կեանքը նուիրէ ուսումնասիրութիւններու, և այսպէս Ամերիկացի ուսումնականներուն մէջ առաջին տեղը գրաւեց: Հիմա իրաւունք ունի պատիւներու և տիտղոսներու երկար շարք մը կրելու իր անունէն ետքը, և անդամ է հինգ վեց գիտական ընկերակցութիւններու:

ԱՐԳԱՐՈՒԹԵԱՆ ԶԱՆԳԱԿԸ

Կը պատմուի թէ Խտալիոյ հին քաղաքի մը մէջ թագաւորը հասարակաց մէկ հրապարակին մէկուն աշտարակին վրայ զանգակ մը կախել տուաւ, և զանիկա «Արդարութեան Զանգակ» անուանեց, և հրաման հանեց թէ ով որ անիրաւութիւն մը կրէ, երթայ և հնչեցնէ զանգակը, և այսպէս հրաւիրէ քաղաքին դատաւորը գալ և տեսնել թէ արդարութիւնը գործարուած է: Ժամանակ մը ետքը զանգակին չուանին ծայրը մաշելով վերթաւ, ուստի վայրի որթի ճիւղ մը կապուեցաւ անոր որպէս զի երկնայ չուանը:

Օր մը ծեր և սովատանջ ձի մը որ արձակուած էր իր անգութ անէրոջ մէջ որպէս զի մեռնէր, թափառելով աշտարակին քով եկաւ, և երբ կը ջանար ուտել որթը, հնչեց զանգակը որուն կցուած էր անիկա: Երբ քաղաքին դատաւորը եկաւ տեսնելու թէ ո՞վ էր զանգակը զարնողը, այս ծեր ձին տեսաւ հոն: Այն ատեն դատաւորը կանչել տուաւ խեղճ ձիին տէրը և վճռեց թէ այս կենդանիին որ այսպէս անիրաւութիւն կրած էր և զարկած էր Արդարութեան Զանգակը, պէտք էր որ իրաւունք և արդարութիւն ըլլար: Ուստի հրամայեց տէրջը որ առնէ սուն տանի ձին, և կերակրէ ու խնամէ զանիկա որչափ ատեն որ ապրի:



ՊԱՏՈՒԵԼԻ ԹՈՎ ՀԱՆՆԵՍ ՏԵՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ
Մենք զանիկա չենք անուաներ բարի մարդ մը որ միայն մէկ բարի յատկութիւն ունի: Մարդու մը նկարագրին վրայ իրովին զմայլելու և զանիկա գովելու համար, պէտք է որ անոր վրայ շատ բարի յատկութիւններ միացած տեսնենք, տեսնենք նաև անոնց ներհակ մոլորութիւններէ զերծ ըլլալը: Պատ. Յովհաննէս ՏԵՐ Ստեփանեան մեզի կ'երևնար այնպիսի անձ մը որուն մէջ բարի յատկութիւններու միացում և յոռի յատկութիւններու բացակայութիւն կը տեսնուէր: Որչափ որ կարող էինք տեսնել, ան չունէր գէշ բնութիւններ որ խանգարէին իր բազում բարի բնութիւնները: Երբ կը թուարկենք անոր առաքինութիւնները, անոնց գումարէն հանելու գէշ ունակութիւններ կամ անհաճոյ յատկութիւններ շատ չեն որ պակսին անոնք: Բայց թէպէտ բարի մարդ մը բազում բարի յատկութիւններ ունենայ,

կրնայ այնպիսի առաքինութիւն մը ունենալ որ մասնաւոր կերպով նշանաւոր ըլլայ: Եւ Պատ. Յովհաննէսի վրայ տեսնուած մէկ յատկութիւնը որ մեր ուշադրութիւնն ամենէն աւելի դրաւած է, անոր նկարագրին քաղցրութիւնն է: Անիկա իր կամքին ոյժովը, կամ իր շքեղ պերճախօսութիւնովը չէր որ կը քաշէր մարդիկը, այլ իր ազնիւ, համբերող և սիրելի բնաւորութիւնովը: Ուրիշ ազնիւ յատկութիւններէ զուրկ չէր, բայց ասիկա գերազանց էր: Անկարելի էր կուռիլ իրեն հետ, կամ տարակուսիլ իր բարեկամութեան և կամ իր անանձնատէր սիրոյն վրայ: Մենք զօրաւոր կերպով անոր կը քաջուէինք իր այս յատկութեան պատճառաւ, և վստահ ենք թէ ուրիշ շատեր ալ կը զգային անոր մագնիսական զօրութիւնը:

Պատ. Յովհաննէս ծնաւ Ռոտոսթօ 1832ին: Երբ 16 կամ 17 տարեկան եղաւ, կոստանդնուպոլիս եկաւ, և հինգ տարի աշակերտեցաւ Տր. Համլինի ճեմարանին մէջ ի Պէպէք: Անոր աշակերտակիցներուն մէջ կը գտնուէին Պատ. Մարտիրոս Ծմաւոնեան, Պատ. Աղեքսանդր Ճէճիզեան և Պատ. Թովմաս Պոյաճեան: Անոր քարոզչական պաշտօնն սկսաւ Ազրիանուպոլիս, ուր կարճ ժամանակ կեցաւ, անկէ ետքը աշխատեցաւ Պարտիզակ հինգ տարի, յետոյ Պիլէճիկ տասը տարի, և իր կեանքին մեծ մասը հովուական երկարատեւ պաշտօնով անցուց Ռոտոսթօ: Մեռաւ Պարտիզակի մէջ 68 տարեկան, և իր գերեզմանը կը գտնուի իր հին աշխատակից Մր. Փարսնիսի գերեզմանին մօտ:

ՅՕԺԱՐԱԿԱՄ ԶՏՈՒՈՂԸ

Եթէ տուրք մը օրհնութիւն կը բերէ տուրքը տուողին, համեմատութեամբ սրտին որով կու տայ զայն, այն Սկովտացին որուն վրայով կը պատմէ Անդղիական թերթ մը հետեւեալ պատմութիւնը, քիչ օրհնութիւն ընդունեց իր առատածեռնութենէն: Բոպըրթ Բէրլը, Սկովտիոյ ամենէն հարուստ դրամատէրներէն մին, ասկէ քանի մը սերունդ առաջ, այնքան գծուծ մարդ էր որքան հարուստ: Օր մը երբ անոր այցելեց պատուիրակութիւն մը որ դրամ կը հաւաքէր նոր հիւանդանոցի մը համար, ինք երկու ոսկի ստորագրուեցաւ: Պատուիրակութեան անդամներէն մին երբ ցաւ յայտնեց տրուած ստակին քիչ ըլլալուն համար, ան «իրաւ որ աւելի չեմ

կրնար տալ» ըսաւ : Պատուիրակութիւնը յետոյ սոցիալեց Ուիլսոնի, որ քաղաքին ամէնէն մեծ տարազագործներէն մին էր : Ուիլսոն տեսնելով ստորագրութիւններու թուղթը, գոչեց, «Վայ, քէրիք միայն երկու ոսկի» : Երբ լսեց թէ ինչ ըսած էր քէրիք, գրամատէրը, Ուիլսոն պատասխանեց, «Սպասեցէք, ես անոր դաս մը պիտի տամ» : Իր փոխանակագրի (չէք) գիրքը առաւ, և փոխանակագրի մը մէջ գրեց 10,000 Անգլ. ոսկի, զոր ի պահ հետո գրած էր քէրիքի գրամատան մէջ, և զրկեց զայն որպէս զի անմիջապէս վճարուէր : Հինգ վայրկեան ետքը գրամատէրը երեցաւ հե ի հե, և հարցուց, «Ի՞նչ է այս, Ուիլսոն» : «Ոչ ինչ», պատասխանեց Ուիլսոն, «բայց այս պարտքերը իմացուցին ինձի թէ դուք երկու ոսկիէն աւելի չէք կրնար տալ հիւանդանոցին համար : Մտածեցի ինքնիրենս, եթէ բանն այդպէս է, ես սխալ կ'ընեմ ուրեմն. պէտք է որ իմ ստակս քաշեմ առնեմ որչափ կարելի է շուտով» : քէրիք առաւ ստորագրութեան ցուցակը և երկու ոսկին աւելելով, անոր տեղ յիտուն գրեց, այն ատեն Ուիլսոն ամիջապէս պատուեց փոխանակագիրը :

ՏՂԱՆ ԱՉԱՏԵՅ

Երբ Ուաշինկթըն, զոր Ամերիկացիք Հայրենեաց հայր կ'անուանեն, իբր 18 տարեկան պատանի մըն էր, անգամ մը երկրաչափի օգնական կարգուեցաւ : Իր պաշտօնին բերմամբ մեծ անտառի մը մէջտեղը կը գտնուէր սաստիկ վաղող շուրի մը մօտ : Օր մը լսեց սոսկուածէն ճող կնոջ մը ձայնը : Կինը Ուաշինկթընը տեսածին պէս, «Ոհ, տէր, չէք օգնեք ինձի : Իմ խեղճ պղտիկ տղաս ջուրն ինկաւ, և այս մարդիկը չեն թողոր որ ազատեմ զանկա» : «Օգուտ չունի : Եթէ այդ կինը այս ժայռուտ գետը ցատկէ, մէկ վայրկեանէն կտոր կտոր պիտի ըլլայ : Հաւանական չէ որ կարող ըլլայ ազատել տղան, և իր կեանքը վրայ պիտի տայ» : կ'ըսէր մարդոց մէկը : Բայց Ուաշինկթըն, որ այս խօսքերը լսեց, անմիջապէս միտք բերաւ այն փայտուն, չէկ մազերով փոքրիկ տղան, որու խաղալը յաճախ տեսած էր իրենց մօտը գտնուող խրճիթին առջև : Արագ մը նայեցաւ կատաղի և սաստիկ վազող հոսանքին վրայ : Շուտով տեսաւ տղին ճերմակ հանդերձները, և առանց ուրիշ վայրկեան մըն ալ սպասելու, հանեց մէկ կողմ նետեց վե-

րարկուն, և ցատկեց գոռայող ալիքներուն մէջ : «Փառք Աստուծոյ, երբ տասարդը պիտի ազատե տղաս», գոչեց մայրը : «Ոհ, տղաս, սիրելի՛ զաւակս» : Երբեմն երբեմն այնպէս կ'երևէր թէ իրօք պիտի զարնուէր և կտոր կտոր պիտի ըլլար անիկա սուր ժայռերուն դէմ : Նորէն այն զօրաւոր հոսանքը կը ամենք զանկա շուրին տակ, և աչքէ կը ծածկէր : Մանուկը երկու անգամ աներևոյթ եղաւ շուրերուն ներքեւ և նորէն վեր ելաւ : Յառաջ և յառաջ լողաց քաջն Ուաշինկթըն, և աղին գրեթէ քովը հասաւ, բայց չկրցաւ բռնել զանկա : Վերջապէս անոնք երկուքն ալ մօտեցան գետին ամէնէն վտանգաւոր մասին, նոյն խկ ջրվէժներուն : Մայրը կը գողար անձկութենէն, որ չըլլայ թէ երիտասարդը թողու իր վտանգաւոր գործը : Բայց այդ չէր իրողութիւնը, անիկա իր ջանքերը կը կրկնէր միայն : Երբ գրեթէ ջրվէժին մէջ գացած էին երկուքն ալ, Ուաշինկթըն վերցուց տղան և վեր բռնեց իր ուժեղ աջ բազուկով : Ինչ ուրախութեան աղաղակներ հանեցին ջրեզերքէն դիտողները : Բայց, աւաղ, թէ՛ Ուաշինկթըն թէ՛ տղան աներևութացան ջրվէժին վրայ : Մայրը սարսափով յառաջ վազեց, բայց շուտով ուրախութեան աղաղակ մը հանեց երբ անջնաս սեւ սաւ զանոնք ջրվէժին ոտքը : Բա՛շն Ուաշինկթըն տակաւին տղան բռնած էր և դէպ ի ջրեզը կը լողար : Ուաշինկթըն ինք գրեթէ ուժասպառ եղած էր, երբ վերջապէս ջրեզը հասաւ ապահով՝ աղին հետ որ զգայութիւնը կորսնցուցած էր : Անկարելի է նկարագրել այն մօր երախտագիտութիւնը երբ իր մանուկը վերջապէս անուշիկ մը քնացաւ իր բազուկներուն մէջ : «Աստուած քու վարձքդ պիտի տայ», ըսաւ կինը Ուաշինկթընի, «Անիկա մեծ բաներ պիտի ընէ քեզի համար այս օրուան քու ըրածիդ փոխարէն, և իմ օրհնութենէս զատ ուրիշ հազարաւորներու օրհնութիւնները պիտի ընդունին» :

Եւ ո՛չ ապաքէն այդ կնոջ խօսքերը ստոյգ ելան : Մարդ մը որ քաջութիւն և յօժարութիւն ունի իր կեանքը վտանգի դնելու ուրիշ մը աղատելու համար, այն տեսակ մէկն է, զոր մարդիկ կ'ուզեն որ առաջնորդ ըլլայ իրենց փորձութիւններու մէջ :

ԻՆՔՆԱՎՍԱՀՈՒԹԻՒՆ

Հռչակաւոր հեղինակ մը սովորութիւն ունէր հետեւեալ պատմութիւնը

ընել թէ իր ուսուցիչը ինչպէս իրեն սորվեցուց անձին վստահիլ : Սև տախտակին զրկուեցայ : Դացի անստոյգ անորոյ ոտքով և վախով : «Սոյդ դասը պէտք է սորվիլ» ըսաւ վարժապետս, շատ հանդարտ ձայնով մը և սակայն վճռաբար : Բոլոր բացատրութիւններն ու չքմեղութիւնները մերժեց սաստիկ հեզուութիւնով : «Էս կ'ուզեմ այս խեղիքին լուծուիլ, չեմ ուզեր ուէ պատճառներ» : կ'ըսէր : «Ինչո՞ւ չպատրաստեցիր դասդ» : «Էս երկու ժամ սերտեցի» : «Ատիկա ինձի պէտք չէ. ես դասը կ'ուզեմ : Ինձի համար նոյն բանն է երբեք չեք տելդ կամ երկու ժամ սերտելդ : Ես դասը կ'ուզեմ» : Այս բանը անհաճոյ էր մատղաշ աղի մը համար, բայց օգտակար եղաւ ինձի : Ամիս մը չանցած մտաւոր անկախութեան և քաջութեան յոյժ զօրաւոր զգացում մը ունեցայ : Օր մը անոր ցուրտ, մեղմ «Ոչ» ձայնը լսեցի մինչ դասս կ'ըսէի : Ես այն ատեն վարանեցայ և սկզբէն նորէն սկսայ, և երբ նորէն միևնոյն կէտին հասայ, «Ոչ» ըսաւ համոզական ձայնով մը որ արգիլեց իմ շարունակելու : «Յաջորդը» : Եւ ես նստայ շփոթած ու կարմրած : Դասը կերպ ալ դադարելու հրամանն ընդունեց «Ոչ» բառովը, բայց յառաջ գնաց ընկուց, և երբ տեղը նստաւ, «Շատ լաւ» խօսքը լսեց վարժապետէն : Բողոքեցի թէ «Ինչո՞ւ. ես ալ ճիշդ անոր պէս կ'ըսէի, բայց դուք «Ոչ» ըսիք» : «Ինչո՞ւ թէ չըսիր, և չարեցիր : Բաւական չէ դասդ դիտես : Դուն բան սորված չես, մինչև որ վստահ չըլլաս թէ սորված ես : Եթէ աշխարհ «Ոչ» ըսէ, քու պարտքդ է «Այո» ըսել և ապացուցանել ատիկա» :

ՇԱՐՈՒՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԻ

Երկու գորտեր սեր շինելու սափորի մը մէջ ինկան : Դուրս ցատկելու համար քանի մը անյաջող ջանքերէ ետքը անոնցմէ մէկը թողուց աշխատութիւնը : «Սոսքուտ է ինչ որ ընենք, պիտի մեռնինք» : ըսաւ : «Ոչ», պատասխանեց միւսը, «ես պիտի շարունակեմ ցատկել ս'ըջափ ժամանակ որ կեանք ունենամ : Ո՛վ գիտէ, բան մը կրնայ ըլլալ» : Այս խօսքը նոր քաջարեութիւն մը տուաւ միւս գորտին, և երկուքն ալ սկսան առաջուրնէ աւելի ուժով աշխատիլ վեր ելելու : Բնական արգիւնքը հետեւեցաւ : Կարողը կաթին երեսն ելաւ, և գորտերը անոր վրայ ելելով սափորէն դուրս ցատկեցին ու սկսան իրենց կերակուր միտուել :

Տարեկան բաժանորդագրին 6 դահ. արծաթ կանխիկ, ամէն տեղւոյ համար :

Ամերիկայի Մետիստարց Ընկերութեան կողմէն Արտօնատէր ձ. Բ. ԿԻՒՆ Տնօրէն—Սմաղիլը Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՂԻԽ ՚ ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՌԱ ՊՅՈՒՅԱՆ Յինճանճալար Եօզուշու, Ամերիկան Խաճ